

Հավելված
Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2019թ. նոյեմբերի 14-ի թիվ 6 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Գ. Գ. Գևորգյան
«14» նոյեմբերի 2019 թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ ԵՊՀ) հաշվապահական հաշվառման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, ԵՊՀ-ի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով, ինչպես նաև վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչությունը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվանմամբ դիրժմակնիք, պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում ԵՊՀ գիտական խորհուրդը:

5. Վարչության հաստիքացուցակը հաստատվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից ռեկտորի ներկայացմամբ:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

6. Վարչության գործառույթներն են.

1. Հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական, հարկային, եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի և հատուկ նպատակի այլ հաշվետվությունների (հաշվարկների) կազմումը:

2. Գույքի առկայության և շարժի, նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների (ռեսուրսների) հաշվառման ապահովումը:

7. Վարչության իրավասությունն է.

1. Ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի, ինչպես նաև գործունեության արդյունքների վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքումը, գրանցումը և ընդհանրացումը՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

2. Ֆինանսական, հարկային և կառավարչական հաշվառման իրականացումը:

3. Ֆինանսական, հարկային, կառավարչական և հատուկ նպատակի այլ հաշվետվությունների (հաշվարկների) կազմումը, համապատասխան մարմիններին սահմանված կարգով և ժամկետներում ներկայացումը:

4. ԵՊՀ-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի և կատարողականի կազմումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչության կառուցվածքը ներկայացված է սույն կանոնադրության հավելվածում:

9. Վարչության աշխատողների աշխատանքային պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով (աշխատանքի նկարագրով), ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրով, ԵՊՀ ներքին իրավական ակտերով և գլխավոր հաշվապահի հանձնարարականներով: Աշխատանքային պարտականությունների կատարումից ԵՊՀ-ին գույքային (նյութական) վնաս պատճառելու դեպքում աշխատողները կրում են լիակատար գույքային և անձնական պատասխանատվություն:

10. Վարչությունը ղեկավարում է վարչության պետ-գլխավոր հաշվապահը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:

11. Վարչության պետ-գլխավոր հաշվապահը՝

1. Կազմակերպում և վերահսկում է վարչության գործունեությունը, ապահովում է վարչահոլության հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ վարչության փոխհամագործակցությունը:

2. Կատարում է աշխատանքի բաժանում վարչահոլության աշխատողների միջև:

3. Սահմանված կարգով տնօրինում է վարչությանը հատկացված ֆինանսական միջոցները:

4. Ներկայացնում է վարչությունը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, վարչության անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում:

5. Կազմում և ներկայացնում է ֆինանսական, հարկային և այլ հաշվետվություններ:

6. Պատասխանատվություն է կրում վարչության կողմից իրականացվող աշխատանքների որակի և վարչության առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

7. Լուծում է սույն կանոնադրությունից բխող և վարչության գործունեության հետ կապված այլ հարցեր:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Վարչության վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

13. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՊՀ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վարչության կազմում ներառված են հետևյալ բաժինները.

- Հաշվետվությունների և վերահսկման բաժինը,
- Հաշվառման բաժինը: